
**ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԹԵ՞ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Ս.

Յուրաքանչյուր հակամարտության շահագրգիռ կողմերի համար հատուկ ուշադրության առարկա է այլ հակամարտությունների կարգավորման ընթացքը՝ ակնկալելով, որ ավելի արագ զարգացող կարգավորման գործընթացը կարող է դառնալ նախադեպ մյուս հակամարտությունների համար: Այդուհանդերձ, պարբերաբար տարբեր ազդեցիկ ատյանների ներկայացուցիչներ միանգամայն իրավացիորեն հայտարարում են, որ հակամարտությունների համար համապիտանի լուծումներ չկան: Եւրաքանչյուր հակամարտություն ունի պատմական, քաղաքական, իրավական և այլ առանձնահատկություններ, և յուրաքանչյուրի համար պետք է գտնել այդ ամենը հաշվի առնող յուրահատուկ լուծում: Վերջին մեկ տարում նման իրավիճակ է ստեղծվել հատկապես Կոսովոյի հակամարտության կապակցությամբ, քանի որ ուրվագծվում է այն լուծումը, որն առաջարկում են այդ հակամարտության կարգավորմամբ զբաղվող ՄԱԿ-ի ներկայացուցիչները: Իհարկե, որևէ հակամարտության ընթացքի ու կարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը հետաքրքիր է, բայց այն կարող է որպես օրինակ օգտակար լինել միայն հակամարտությունների կարգավորման սկզբունքներն ու իրավական հիմքերը ճշտելուց հետո: Սակայն մինչ հակամարտությունների կարգավորման իրավական հիմքերին անդրադառնալը, կարևոր է դիտարկել հակամարտությունների դասակարգումը, դրանց կարգավորման շրջանակները:

Հակամարտությունների կարգավիճակը: Թեև խիստ իրավական մոտեցմամբ հակամարտությունների զգալի մասը միջազգային չէ (հակամարտությունը մեկ պետության կամ մեկ ազգի ներսում է, կամ հակամարտության կողմերից մեկը պետություն չէ), սակայն սոցիալական գործընթացների խորացող գլոբալացման պայմաններում ազգամիջյան, սոցիալական, տնտեսական բնույթի հակամարտությունների զգալի մասը ստանում է միջազգային չափում: Այդ առումով հակամարտությունների կարգավիճակը բնութագրելիս առաջնային նշանակություն ունի ոչ թե դասական մոտեցումը՝ միջազգային=միջպետական, այլ միջազգային հանրության ներգրավվածությունը կարգավորման գործընթացում: Պակաս կարևոր չէ նաև միջազգային հանրության սահմանումը՝ պատկերացնելու համար այն շրջանակը, որտեղ ձևավորվում են միջազգային հակամարտությունների կարգավորման բանաձևերը: Թեև տարբեր ուսումնասիրողների¹ սահմանումները միմյանցից շատ չեն տարբերվում, այնուամենայնիվ, դրանցից առավել ամբողջականը և խնդրո առարկայի տեսակետից

¹ **Rieff D.**, *A New Age of Liberal Imperialism. American Foreign Policy. Sixth Edition.* New York. 2000/2001, p. 21. **Bull H.**, *The Anarchical Society: A Study of Order in World Politics*, 2nd Edition. London, 1995, p. 13.

կարևորը Դ. Ռիֆի սահմանումն է. միջազգային «հանրության սահմանումը մեծապես, եթե ոչ բացառապես, իրավական է, և այդ հանրությունը բաղկացած է պետություններից, որոնք կնքում են զանազան կոնվենցիաներ և պայմանագրեր, և ակտիվ, ոչ կառավարական կազմակերպություններից, որոնք լոբբինգ են անում նրանց շրջանում»: Այս սահմանման առանձնահատկությունն այն է, որ միջազգային հանրության մեջ ներառված են նաև ոչ կառավարական կազմակերպությունները, ինչն առանձնահատուկ ուշադրության է արժանի ստորև հիշատակվող նման կազմակերպությունների օրինակով:

Հակամարտությունների կարգավորման ժամանակ միջազգային հանրության դերակատարության տեսակետից շատ կարևոր է երկու հարցի պատասխան.

• ո՞վ կարող է միջազգային հանրության անունից հանդես գալ որպես միջնորդ կամ խաղաղարար առաքելություն իրականացնող.

• ի՞նչ առաքելություն պետք է իրականացվի հակամարտության կարգավորման համար:

Խաղաղարար կամ կարգավորման առաքելություն իրականացնելու ՄԱԿ-ի մանդատը հանրաճանաչ է և չի վիճարկվում որևէ մեկի կողմից: Ավելին, բացի ՄԱԿ-ից, խաղաղարար առաքելություն կարող են իրականացնել այն կազմակերպությունները, որոնք բավարարում են ՄԱԿ-ի կանոնադրության VIII գլխի պահանջները: Օրինակ, մի շարք տարածաշրջանային կազմակերպությունների (ԱՊՀ, ՆԱՏՕ, ՀԱՊԿ և այլն) կողմից նման առաքելություն իրականացնելու իրավասությունը շարունակում է մնալ վեճերի առարկա: Ավելին, որևէ մեկի կողմից միջամտությունը հակամարտությանը՝ առանց հակամարտող կողմերի համաձայնության, անվերապահորեն պահանջում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համաձայնությունը:

Ինչ վերաբերում է հակամարտությունների կարգավորմանն ուղղված միջազգային առաքելությունների դասակարգմանը, ապա դրանք կարելի է բաժանել չորս հիմնական խմբի².

• իրավական (նախ՝ միջազգային իրավական),
• գործառույթային (քաղաքական, դիվանագիտական, կոնֆլիկտոլոգիական և այլն),

• ռազմական,

• գաղափարախոսական:

Միաժամանակ, հաշվի առնելով վերջին տասնամյակների զարգացումները, փորձեր են արվում դասակարգելու խաղաղարար առաքելությունները՝ ըստ նպատակի.

• հակամարտությունների կանխում,

• մարդասիրական միջամտություն,

• ռազմական միջամտություն,

• զինաթափում,

² Никитин А., *Международные конфликты и их регулирование (Мировая экономика и международные отношения, 2006, N 2, с. 3-16).*

• ազատ տեղաշարժման ապահովում:

Մասնավորապես, Կոսովոյի հակամարտության կարգավորմանն ուղղված միջազգային միջամտությունը, ըստ բրիտանացի Չ. Դոբբիի³, կարելի է բնութագրել որպես միջամտություն՝ մարդկային աղետը կանխելու համար: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը, ապա այդ ուղղությամբ առաջին քայլերն իրականացվել են ԱՊՀ շրջանակներում: ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի նախաձեռնությամբ 1994 թ. մայիսի 5-ին կնքվել է հրադադարի համաձայնագիր, որը ստորագրել են հակամարտության երեք կողմերի ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարները և Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատարը⁴:

Ինչ վերաբերում է հետկոնֆլիկտային կարգավորման հարցերի լուծմանը, ապա միջազգային իրավունքի շրջանակներում դա հնարավոր է իրականացնել միայն ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի մակարդակով: Այդ առումով թե՛ Կոսովոյի, թե՛ Լեռնային Ղարաբաղի հետկոնֆլիկտային կարգավորման գործընթացները գտնվում են միջազգային իրավունքի շրջանակներում:

Հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա ազդող գործոնները բազմազան են՝ իրավական, պատմական, ժամանակային և այլն: Թեև ամեն մի կոնկրետ հակամարտության համար այս գործոնները կարող են ունենալ տարբեր ազդեցություններ և կշիռներ, այդուհանդերձ, դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը թե՛ ընդհանրապես, թե՛ կիրառման միջավայրում հետաքրքրություն է հարուցում: Միաժամանակ, ակնհայտ է, որ այդ գործոնների մեջ առանձնանում է իրավական բաղադրիչը, քանի որ որևէ լուծման և դրա մեխանիզմների յուրաքանչյուր ընտրության ժամանակ այն պետք է ունենա իրավական հիմնավորում, տեղավորվի միջազգային իրավունքի սահմաններում: Այդ գործոնը սահմանում է հակամարտության կողմերից յուրաքանչյուրի իրավունքների շրջանակը, որի մեջ այս կամ այն կողմը պետք է կարողանա տեղավորել իր ակնկալիքները:

Հակամարտությունների կարգավորման իրավական հիմքերը. տարածքային ամբողջականություն, թե՛ ինքնորոշման իրավունք: Միջազգային հակամարտությունների կարգավորման գործընթացների զարգացումները կանխատեսելու, դրանց վրա այս կամ այն ազդեցությունն ունենալու տեսակետից մեծապես կարևոր է ճշտել այն սկզբունքները, մոտեցումները, արժեքները, որոնց շրջանակներում ձևավորվում են կարգավորման սխեմաները:

Առավել ընդհանրական փաստաթուղթը, որը կարող է հիմք լինել հակամարտությունների կարգավորման համար, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների բիլլն⁵ է, որը ներառում է Մարդու

³ Dobbie Ch., *A Concept for Post-Cold War Peacekeeping* (Survival, v. 36, N 3. Autumn 1994, p. 122).

⁴ Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, М., 2004.

⁵ Մարդու իրավունքների միջազգային բիլլ: Ե., 2003. <http://www.un.org/cyberschoolbus/treaties/human.asp>:

իրավունքների համընդհանուր հռչակագիրը (10 դեկտեմբերի 1948 թ.), Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիրը (16 դեկտեմբերի 1966 թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (16 դեկտեմբերի 1966 թ.): Դրանցից վերջին երկուսի առաջին հոդվածները արձանագրում են. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»: ՄԱԿ-ի կանոնադրության⁶ 1.2 հոդվածը նույնպես սահմանում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հիմնարար նշանակությունը: Այս փաստաթղթերը թեև պարտադիր են ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների համար և հստակ ու անվերապահորեն սահմանում են ազգերի ինքնորոշման իրավունքը, սակայն հանիրավի (միգուցե նաև միտումնավոր) հաճախ չեն հիշատակվում հակամարտությունների կարգավորման ժամանակ, հատկապես՝ Եվրոպայում: Ի հակադրություն դրան, Հելսինկյան եզրափակիչ ակտը միշտ նշվում է որպես հակամարտությունների կարգավորման հիմնարար փաստաթուղթ: Մասնավորապես, ըստ Հարավային Կովկասի երկրներում Եվրոպայի Միության հատուկ ներկայացուցիչ Փ. Մեմնեբիի⁷, «Հելսինկյան եզրափակիչ ակտը հիմնարար բազա է Եվրոպայում անվտանգության և փոխհարաբերությունների համար: Այն սահմանում է տարբեր սկզբունքներ, այդ թվում՝ տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքները: Դրանք գործնականում հակասությունների մեջ են մտնում միմյանց հետ, օրինակ, երբ վերաբերում են Հարավային Կովկասի բոլոր սառեցված հակամարտություններին: Բայց դա չի նշանակում, որ այդ սկզբունքների կիրառումն անհնար է, հնարավոր չէ այդ սկզբունքները համատեղել: Դա դժվար է, բայց հնարավոր է»: Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ այդ երկու սկզբունքների կիրառելիության ճշտման յուրահատուկ մոտեցում է ցուցաբերել Ն. Հովհաննիսյանը⁸: Դիտարկելով ինքնորոշման տարատեսակների Հալպեբինի և Շիֆերի դասակարգումը⁹՝ նա եկել է այն եզրակացության, որ այդ սահմաններում Լեռնային Ղարաբաղի հայերի ինքնորոշման ձգտումները վիճարկելի չեն, և չի խախտվել Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը: Այդուհանդերձ, քանի որ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմամբ զբաղվում է ԵԱՀԿ-ն, հատուկ հետաքրքրություն ունի հարցի դիտարկումն այն տեսակետից, որը հաճախ է հնչում տար-բեր ատյաններում. կա⁹ հակասություն Հելսինկյան եզրափակիչ ակտում ներառված երկու սկզբունքների՝ սահմանների անձեռնմխելիության (տարածքային ամբողջականության) և ինքնորոշման իրավունքի միջև:

⁶ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն. Ե., 2003:

⁷ Сэмнеби П., Решение конфликтов Южного Кавказа силовым путем исключено (Независимая газета, 26.12.2006).

⁸ Hovhannisyan N., *The Karabakh Problem*. Yerevan, 2004.

⁹ Halperin M., Scheffer D., Sall P., *Self-Determination in the New World Order*, Washington DC, 1992.

Զարմանալի է, բայց փաստ, որ տևական մի ժամանակահատված հաջողությամբ հղումներ են արվում Հելսինկյան եզրափակիչ ակտին՝ որպես տարածքային ամբողջականության սկզբունքը հակամարտությունների լուծման միակ սկզբունք հռչակող փաստաթղթի: Մասնավորապես, Ղաբաթայան խնդրի կարգավորման ընթացքում Ադրբեջանի ներկայացուցիչները հաճախ են օգտվում այդ հնարքից: Մինչդեռ դա անգամ շահարկում չէ, այլ պարզունակ աճապարարություն, քանի որ Հելսինկյան եզրափակիչ ակտի ամբողջական ուսումնասիրությունը պարզորոշ բացահայտում է, որ հենց Ադրբեջանի դիրքորոշումն է մի շարք առումներով հակասում այդ փաստաթղթին: Հելսինկյան եզրափակիչ ակտով ընդունված Հռչակագիրն¹⁰ արձանագրում է, որ մասնակից պետությունները պայմանավորվել են հարգել և գործնականում կիրառել միմյանց միջև հարաբերությունները կարգավորող 10 սկզբունքներ, որոնցից, քննարկվող հարցի տեսկետից, առավել ուշադրություն են բևեռում Ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելը (II), Սահմանների անխախտելիությունը (III), Տարածքային ամբողջականությունը (IV), Վեճերի խաղաղ կարգավորումը (V), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումը (VII), Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքները (VIII), Միջազգային իրավունքով ստանձնած պարտավորությունների կատարումը (X): Ընդ որում, Հռչակագիրը սահմանում է նաև որ «բոլոր այդ սկզբունքներն էլ ունեն առաջնահերթ նշանակություն»: Ակնհայտ է, որ Հռչակագիրը ոչ միայն գերակայություն չի սահմանում երրորդ (կամ չորրորդ) և ութերորդ սկզբունքների միջև, այլև նրա երկրորդ, հինգերորդ և տասներորդ սկզբունքները շարունակաբար խախտում է Ադրբեջանը:

Միջազգային իրավունքի շրջանակներում հակամարտությունների կարգավորման տեսակետից չափազանց կարևոր են հետևյալ հարցադրումների պատասխանները. իսկապե՞ս հակասություն կա տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի սկզբունքների միջև, եզրափակիչ ակտն ընդունելիս, այն ստորագրող երկրների ներկայացուցիչները մի՞թե այնքան անփույթ են գտնվել, որ հիմնարար սկզբունքների մեջ ընդգրկել են միմյանց հակասող մոտեցումներ: Կարելի է պնդել, որ այդ տեսակետը որևէ քննադատության չի դիմանում, քանզի այդ երկրների շարքում էին երկու գերտերությունները, եվրոպական բոլոր ազդեցիկ պետությունները, որոնց համար նման փաստաթղթի յուրաքանչյուր դրույթ ուներ չափազանց մեծ թե՛ իրավական, թե՛ առավել ևս քաղաքական նշանակություն: Հետևաբար, այդ երկու սկզբունքների հակադրումը միմյանց հետապնդում է սուսկ քաղաքական նպատակներ կամ, լավագույն դեպքում, անտեղյակության հետևանք է: Հակասության բացակայությունն ավելի՛ ակնհայտ է դառնում խնդիրը իրավական հարթությունում քննելիս՝ Հռչակագիրը ոչ թե հատվածաբար, այլ ամբողջությամբ դիտարկելով: Հատուկ ուշադրության է արժանի հետևյալ արձանագրումը. «մասնակից պետությունները պայմանավորվել են հարգել միմյանց միջև

¹⁰ Conference on Security and Co-operation in Europe. Final Act-http://www.osce.org/documents/cs/1975/08/4044_en.pdf.

հարաբերությունները կարգավորող 10 սկզբունքներ»։ Ավելին, Հռչակագրի սահմանումը երրորդ սկզբունքի վերաբերյալ շատ հստակ է. «Մասնակից պետություններն անխախտելի են համարում միմյանց բոլոր սահմանները...Նրանք, համապատասխանաբար, ձեռնպահ կմնան նաև որևէ պահանջից կամ գործողությունից, որի նպատակը կլինի որևէ Մասնակից պետության ամբողջ տարածքի կամ դրա մի մասի զավթումը և բռնատիրությունը»։ Նույնն է նաև չորրորդ սկզբունքի պարագայում. «Մասնակից պետությունները ձեռնպահ կմնան Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակների ու սկզբունքների հետ անհամատեղելի որևէ գործողությունից՝ ընդդեմ որևէ Մասնակից պետության տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության կամ միասնականության, և, մասնավորապես, որևէ այնպիսի գործողությունից, որն իրենից կներկայացնի ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառում»։

Մասնակից պետությունները հավասարապես ձեռնպահ կմնան միմյանց տարածքները, ի խախտումն միջազգային իրավունքի, զինված գրավման կամ ուժի կիրառման ուղղակի կամ անուղղակի այլ միջոցառումների օբյեկտի վերաձեռնույց կամ նման միջոցառումների կամ դրանց սպառնալիքի միջոցով բռնակցման օբյեկտի վերաձեռնույց։ Ոչ մի գրավում կամ այդ կարգի բռնակցում օրինական չի ճանաչվի» : Հետևաբար, այդ սկզբունքները վերաբերում են պետությունների միջև հարաբերություններին, և դրանց շրջանակներում պետությունները պարտավորվել են հարգել միմյանց միջև սահմանների անձեռնմխելիությունը, տարածքային ամբողջականությունը։ Մինչդեռ ինքնորոշման իրավունքը բացարձակապես կապ չունի երկու պետությունների միջև սահմանների խնդրի հետ։ Այն մեկ երկրի ներսում տեղի ունեցող գործընթացներին է վերաբերում, որտեղ կողմերից մեկը պետություն է, մյուս կողմը՝ այլ միավորում։ Ակնհայտ է, որ Ադրբեջանում հիանալի հասկանում են այս տարբերությունը, և այդ պատճառով է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված՝ առավել հետևողականորեն ցանկանում են ամրապնդել այն մոտեցումը, որ հակամարտությունը ոչ թե Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի միջև է, այլ Հայաստանի և Ադրբեջանի։ Այդ տեսակետից թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչները պետք է ամեն ինչ անեն պահպանելու համար ԵԱՀԿ, ԱՊՀ և այլ փաստաթղթերի¹¹ ուժը, որոնցում Լեռնային Ղարաբաղը արձանագրված է որպես հակամարտության կողմ։ Առաջարկվող մոտեցման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման Ադրբեջանից անկախության իրավական հիմքերի տեսակետից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) ընդունած 1416 բանաձևը¹²։ Վեհաժողովը վերահաստատում է, որ «մարզային տարածքի անկախությունը և առանձնացումը պետությունից կարող է ձեռք բերվել միայն օրինական և խաղաղ գործընթացի միջոցով՝ հիմնված տվյալ տարածքի բնակիչների ժողովրդավարական աջակցության

¹¹ **Абасов А., Хачатрян А.**, նշվ. աշխ., հավելված 12, 13:

¹² *PACE Resolution 1416 (2005) . The Conflict over the Nagorno-Karabakh Region Dealt with by the OSCE Minsk Conference (Adopted by the Assembly on 25 January 2005).*

վրա ...Վեհաժողովը կրկնում է, որ անդամ երկրի կողմից օտար տարածքի գրավումը՝ Եվրախորհրդի անդամ երկրի կողմից ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում է և վերահաստատում է հակամարտության տարածքից տեղահանված անձանց՝ ապահով և արժանապատվությամբ իրենց տները վերադառնալու իրավունքը»։ Բանաձևը Հելսինկյան եզրափակիչ ակտի և ՄԱԿ-ի վերոհիշյալ փաստաթղթերի շրջանակում ձևակերպում է վերոհիշյալ երկու սկզբունքների կիրառումը Ղարաբաղյան խնդրի կարգավորման համար։ Նախ արձանագրվում է, որ Լեռնային Ղարաբաղը կարող է անկախանալ Ադրբեջանից օրինական և խաղաղ գործընթացի միջոցով՝ հիմնված Լեռնային Ղարաբաղի բնակիչների ժողովրդավարական աջակցության վրա (*ինքնորոշման իրավունք, հանրաքվե*), ապա նաև զգուշացվում է, որ եթե որևէ տարածք միացվի Հայաստանի Հանրապետությանը, ապա դա կդիտվի որպես պարտավորությունների (*տարածքային ամբողջականության*) կոպիտ խախտում։

ԵՖԽՎ 1416 բանաձևում արձանագրված մոտեցումներն իրենց արձագանքը գտան ԵՖԽՎ 1690 հանձնարարականին՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի պատասխանում¹³։ Նախարարների կոմիտեն «գոհունակությամբ նշում է Պրահայի գործընթացի շրջանակներում այս հակամարտության խաղաղ կարգավորման ուղղակի երկխոսության շարունակությունը և միջազգային իրավունքի լիակատար հարգումը (մասնավորապես Հելսինկյան եզրափակիչ ակտի (1975)՝ պետությունների տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ 4-րդ և 8-րդ սկզբունքները)։ Այն վերահաստատում է իր լիակատար աջակցությունն այդ երկխոսության հաջողությանը և այս կապակցությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին»։

Այսպիսով, ակնհայտ է, որ հակամարտությունների կարգավորման իրավական հիմքը միջազգային իրավունքի նորմ հանդիսացող ազգերի ինքնորոշման իրավունքն է և սահմանների անձեռնմխելիության (տարածքային ամբողջականության) սկզբունքը՝ իրենց կիրառման ոլորտների հստակ տարանջատմամբ։ Միաժամանակ, առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև հետևյալ խնդիրը. որո՞նք են այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված է ազգերի ինքնորոշման իրավունքի օգտագործումը այս կամ այն ծավալով։

Ինքնորոշման իրավունքը ինքնորոշվող ժողովուրդը, իր ընտրությամբ, *կարող է կիրառել*, ըստ Ակսենյոնովի¹⁴, ինքնորոշման հնարավոր տարբերակներից որևէ մեկը. մշակութային ինքնավարությունը, ֆեդերատիվ և կոնֆեդերատիվ պետական կառույցները, ազգային-տարածքային միավորները, որոնք ունեն տնտեսական ինքնուրույնության տարբեր մակարդակներ, միջպետական ինտեգրացիան՝ կենտրոնին փոխանցելով ազգային

¹³ PACE Doc. 10685. Reply from the Committee of Ministers of the CoE to the Conflict over the Nagorno-Karabakh Region Dealt with by the OSCE Minsk Conference, [PACE Recommendation 1690 \(2005\)](#) (Adopted at the 938th Meeting of the Ministers' Deputies, 21 September 2005).

¹⁴ Аксенов А. Г., Самоопределение: между правом и политикой (Россия в глобальной политике, 2006, N 5, с. 185-198).

ինքնիշխանության մի մասը, լիակատար անկախություն: Ի՞նչն է հիմք ընդունում ինքնորոշվող ժողովուրդը՝ ինքնուրույնության այս կամ այն սահմանափակումն ունեցող կարգավիճակն ընդունելի համարելու համար: Ըստ Ակսենյոնովի՝ դա տիտղոսակիր ժողովրդի և ազգային փոքրամասնության միջև վստահության մակարդակն է, հավասար սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորումը, վստահությունը կենտրոնական իշխանությունների ողջամտության առկայության, իրենց բոլոր քաղաքացիների համար արժանապատիվ կյանք ապահովելու վերաբերյալ: Փաստորեն, կարևոր գործոն է դառնում եվրոպական երեք հիմնարար արժեքների՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության, օրենքի գերակայության մակարդակների վերաբերյալ ինքնորոշվող ժողովրդի ձգտումների և մյուս կողմի առաջարկի համադրելիությունը: Այս մոտեցումը բավականաչափ հիմնավոր է թվում և կարող է տեղավորվել այն արժեքային համակարգի շրջանակներում, որը հռչակել են եվրոպական կառույցները: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշիչ է ոչ թե այն պետության կարծիքը կամ առաջարկը (մասնավորապես, Ադրբեջանի առաջարկները «ամենալայն ինքնավարության» վերաբերյալ), որի կազմում չի ցանկանում լինել ինքնորոշման իրավունքը կիրառող ժողովուրդը կամ ազգային-տարածքային միավորը, այլ վերջինիս ցանկությունը, քանի որ իրավունքը բացարձակ է և չի կարող սահմանափակվել որևէ մեկի կողմից: Որպես օրինակ կարելի է դիտարկել Կոսովոյի հակամարտությունը: Թեև մշակվել և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հավանությանն է արժանացել¹⁵ վերոհիշյալ հիմնարար արժեքների վրա ձևավորված փաստաթուղթ՝ «Մտանդարտներ Կոսովոյի համար», և դրա իրագործումը խիստ կարևորվում է, այնուամենայնիվ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցչի՝ Ահտիսաարիի առաջարկած լուծման հիմքում Կոսովոյի ձգտումն է՝ անկախությունը, այլ ոչ թե Սերբիայի ցանկությունը կամ առաջարկը, թեև այդ արժեքների տեսակետից Սերբիայում իրավիճակը բացարձակապես համեմատելի չէ Կոսովոյի իրավիճակի հետ՝ Սերբիան շատ ավելի ժողովրդավար երկիր է, քան Կոսովոն: ԼՂՀ-ի և Ադրբեջանի պարագայում ճիշտ հակառակն է: Այդուհանդերձ, հիմնարար արժեքների արմատավորումը կարևոր է և այդ առումով ԼՂՀ Սահմանադրության ընդունումը և հետագա լիարժեք կիրառումը կարող են լրացուցիչ, բայց կարևոր գործոն լինել:

Նույն ենթատեքստում մեկ այլ մոտեցում է առաջարկում Դելյազինը¹⁶: Իհարկե, այն ձևակերպված է որպես հետխորհրդային տարածքում առկա հակամարտությունների նկատմամբ Ռուսաստանի համար նախընտրելի դիրքորոշում՝ մեկնակետ ունենալով տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքների միջև ընտրության պարզ և հասկանալի չափանիշը: Այդ չափանիշը անթերի ժողովրդավարական է և իրենից ներկայացնում է բնակչության ցանկությունը: Եթե այն ապացուցել է ինքնուրույնության իր իրավունքը կամ պատկանելությունը այլ պետությանը այնպես, որ իր հեռանալու ուժը առավել է, քան իր իրավասության տակ

¹⁵ Security Council Support for "Standards for Kosovo". S/PRST/2003/26.

¹⁶ **Делягин М.**, Референдумы про запас (НГ-Дипкурьер, 11.XIX.2006, с. 16).

թողնելու ցանկությունը այն պետության կողմից, որից ցանկանում է հեռանալ, ապա անհնար է կոտրել նրա անմիջականորեն արտահայտված կամքը:

Կա նաև ծայրահեղ մոտեցում Հելսինկյան եզրափակիչ ակտի նկատմամբ: Վ. Կազիմիրովը, որը եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ (Ռուսաստան), կարծում է¹⁷, որ հղումներն այդ փաստաթղթին սնանկ են երկու առումով: Նա մեծապես կարևորում է ժամանակաշրջանի գործոնը. այդ փաստաթուղթն ընդունվել է յոթանասունականների կեսին երկու համաշխարհային համակարգերի հավասարակշռությունը ամրապնդելու համար, մինչդեռ ինստանականները պետությունների փլուզման և նորերի ստեղծման շրջան եղան: Ակնհայտ է, որ սա զուտ քաղաքական մոտեցում է՝ առանց որևէ իրավական հիմքի: Ըստ Կազիմիրովի, եթե անգամ հաշվի է առնվում այդ փաստաթուղթը, ապա առնվազն պետք է նկատի ունենալ, որ Հելսինկյան եզրափակիչ ակտի բոլոր սկզբունքներն ունեն հավասար ուժ և կարևորություն: Դրանցից որևէ մեկը բացարձակ չէ: Լավագույն օրինակը. եթե տարածքային ամբողջականության սկզբունքը բացարձակ է, ապա ինչու այն չգործեց ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի համար: Ո՞ր սկզբունքը գործեց այդ տարածքներում: Ո՞վ է որոշելու սկզբունքի կիրառման սահմանը՝ միութենական հանրապետությունների մակարդակ, թե՞ ԽՍՀՄ օրենսդրությամբ սահմանված որևէ հնարավորություն: Արևմուտքը, մերժելով խորհրդային ամեն ինչ, կամայականորեն գծված խորհրդային սահմանները դարձրել է անձեռնմխելի: Ըստ Կազիմիրովի, ներկա ժամանակահատվածում Հարավային Կովկասում ազգերի ինքնորոշման իրավունքը գերակայություն է ստանում և նախադեպ լինել-չլինելը միայն լրացուցիչ գործոն կարող է լինել և ոչ ավելին: Հիմնական գործոններն են ժամանակաշրջանը, տարածաշրջանը, կոնկրետ հանգամանքները: Իհարկե, թեև արդարացի է ժամանակի գործոնի մատնանշումը, սակայն Հելսինկյան եզրափակիչ ակտի մերժումը ամուր հիմքեր չունի հենց միայն այն պատճառով, որ այդ փաստաթուղթը չեղյալ չի համարված, կամ այն փոխարինող այլ փաստաթուղթ չի ընդունվել: Ավելին, տարածքային ամբողջականության հետ կապված այդ միանգամայն արդարացի մոտեցումներն արդյո՞ք ներկայացվում էին այն ժամանակ, երբ հարցադրումների հեղինակը գործուն դերակատարում ուներ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ՝ որպես համանախագահ: Սա շատ լավ մի օրինակ է, թե ինչպես հակամարտությունների կարգավորման ընթացքում, բացի միջազգային իրավունքի նորմերից, հանրաճանաչ սկզբունքներից, դրսևորվում են այլ գործոններ ևս, տվյալ դեպքում՝ տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող երկրներից մեկի՝ Ռուսաստանի շահը: Ընդ որում, Ռուսաստանի դիրքորոշումը արմատապես հակասում է Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դիրքորոշումներին: Ամենաբարձր պետական մակարդակով մեկ անգամ չէ, որ Ռուսաստանը հայտարարել է, որ հակամարտությունների համար պետք է կիրառել միասնական մոտեցում, իսկ Կոստովյի անկախության ճանաչման

¹⁷ Казимиров В., 8 суждений на рассмотрение. Принципы межгосударственных отношений в политическом урегулировании конфликтов на Южном Кавказе (Голос Армении, 16.XI.2006).

գործընթացի առնչությամբ սպառնացել է բոյկոտել և խոչընդոտել այն, անհաջողության դեպքում՝ ճանաչել Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Մերձդնեստրի անկախությունը: Այդ երկու մոտեցումների պարզ համադրումը վկայում է, որ Ռուսաստանը դեմ է հակամարտությունների հետևանքով նոր պետությունների առաջացմանն ու դրանց ճանաչմանը:

Ինչպես վերը նշվեց, միջազգային հանրության վերաբերյալ սահմանումներում ներառվում են նաև ոչ կառավարական կազմակերպությունները: Հակամարտությունների կարգավորման տեսակետից առավել հետաքրքրական է «Միջազգային ճգնաժամային խմբի» («Քրայսիս գրուփ») դերակատարությունը, որի «գործունեությունն ուղղված է տարածաշրջանային վերլուծությունների և բարձր մակարդակի պրոպագանդի միջոցով կանխելու և հարթելու սուր հակամարտությունները»¹⁸: Կազմակերպությունը գործում է չորս աշխարհամասերի հիսունից ավելի երկրներում, համագործակցում և ֆինանսական աջակցություն է ստանում երկու տասնյակից ավելի երկրներից, բազմաթիվ հիմնադրամներից, խորհրդում ընդգրկված են քաղաքական, դիվանագիտական շրջանակների մի շարք հայտնի ներկայացուցիչներ, որոնք ավարտել են իրենց պաշտոնական գործունեությունը: Կազմակերպության գործունեությունը հետաքրքիր է նրանով, որ երբ այս կամ այն հակամարտության կարգավորման հետ կապված սկսում է ձևավորվել սկզբունքների ինչ-որ շրջանակ, «Քրայսիս գրուփը» դրա հիման վրա ներկայացնում է կարգավորման մանրամասն ծրագիր: Իհարկե, դրան նախորդում են նաև գեկույցներ իրավիճակի մասին՝ տեղում արված ուսումնասիրությունների հիման վրա, և առաջարկվող ծրագրով փորձ է արվում համադրել կողմերի սպասելիքներն ու կարգավորման գործընթացում ձևավորված սկզբունքները: Այդ ծրագրերը հետաքրքիր են շահագրգիռ բոլոր կողմերի համար, եթե անգամ բացակայում է ուղիղ կապ այդ կազմակերպության և կարգավորման խնդիրներով զբաղվող կառույցների միջև, քանի որ մի կողմից ներկայացվում են գաղտնիության պայմաններում անցկացվող բանակցություններում քննարկվող հնարավոր տարբերակներ, իսկ մյուս կողմից՝ դրանք թույլ են տալիս բացահայտել, թե հակամարտության կողմերն ինչպիսի վերաբերմունք կարող են դրսևորել այս կամ այն մեխանիզմի նկատմամբ: Այդ առումով հետաքրքիր է դիտարկել «Քրայսիս գրուփի» առաջարկած ծրագրերը Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների վերաբերյալ, քանզի այս երկու հակամարտությունների համար է, որ այդ կազմակերպության առաջարկությունները հիմնվում են ինքնորոշման իրավունքի վրա: Ընդ որում, ծրագրերում կարևոր տեղ են զբաղեցնում նաև մարդու իրավունքներին վերաբերող այլ առաջարկություններ ևս:

«Քրայսիս գրուփն» առաջարկում էր¹⁹ գնահատել Կոսովոյի իշխանությունների հավատարմությունը ժողովրդավարության սկզբունքներին, մարդու իրավունքների պաշտպանությանը, կառավարման պատշաճ սկզբունքներին, դրա դրական արդյունքի դեպքում մշակել Կոսովոյի հա-

¹⁸ www.crisigroup.org.

¹⁹ *Kosovo: Toward Final Status.Europe Report N 161 24 January 2005-www.crisigroup.org.*

մաձայնագիր, մշակել Կոստովյի Սահմանադրություն հետևյալ սկզբունքների հիման վրա.

- Կոստովն չի միավորվի Ալբանիայի կամ մեկ այլ հարևան երկրի կամ տարածքի հետ, բացառությամբ ԵՄ ինտեգրացիայի,

- Կոստովյի դատական համակարգում կլինեն դատարաններ, որոնց կազմում որոշ դատավորների կնշանակի միջազգային հանրությունը, և միջազգային կառույցները կերաշխավորեն, որ որոշ առանցքային գործեր, որ կվերաբերեն փոքրամասնությունների իրավունքներին և այլ համաձայնեցված խնդիրների, կքննեն այդ դատավորները,

- Կոստովյում կգործի միջազգային վերահսկիչ խումբ, որը միջազգային հանրությանը մշտապես կտեղեկացնի իրավիճակի մասին և կառաջարկի համապատասխան քայլեր, եթե Կոստովն չկատարի իր պարտավորությունները:

Ապա առաջարկվում է ՄԱԿ-ի նախագահությամբ կազմակերպել միջազգային համաժողով՝ այդ համաձայնագիրն ու Սահմանադրությունը քննարկելու համար: Ցանկալի է, որ համաձայնագիրը հավանության արժանանա նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից: Որպես հաջորդ քայլ առաջարկվում է, որ եթե անգամ Կոստովյի անկախության իրավական չճանաչման հարցում հնարավոր չլինի ստանալ Մերքիայի համաձայնությունը կամ այդ հարցով հնարավոր չլինի ընդունել Անվտանգության խորհրդի բանաձև, ապա դա պետք է ճանաչվի առնվազն ԱՄՆ-ի և ԵՄ այն անդամ երկրների կողմից, որոնք որպես լուծում են ընդունում անկախության տարբերակը:

Մերքիայի և Ռուսաստանի անհամաձայնության պարագայում անգամ չի կարելի անորոշ ժամանակով հետաձգել լուծումը:

Լեռնային Ղարաբաղի պարագայում «Քրայսիս գրուփն» առաջարկում է²⁰ հակամարտության կարգավորման «գործնական և իրացվելի ծրագիր»: Մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներից բխող մի շարք այլ առաջարկությունների հետ այդ հասարակական կազմակերպությունը հիմնական խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ մշակել է հետևյալ մոտեցումը.

«...Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը պետք է որոշվի ինքնորոշման հանրաքվեի միջոցով, որը պետք է՝

- անցկացվի այն բանից հետո, երբ տեղահանված ազերիները վերադառնան Լեռնային Ղարաբաղ ...և միջազգային վեհաժողովը հաստատի, որ Լեռնային Ղարաբաղը բավարարում է պետականության, ներառյալ՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգային նախապայմաններ. ընդ որում, այդ գնահատումը առաջին անգամ պետք է անցկացվի խաղաղության պայմանագրի ստորագրումից հինգ տարի հետո,

- *Լեռնային Ղարաբաղին ընձեռի պատշաճ այլընտրանքային հնարավորություններ, այդ թվում նաև՝ միանալ Ադրբեջանին կամ դուրս գալ Ադրբեջանի կազմից,*

²⁰ Լեռնային Ղարաբաղ. Խաղաղության հաստատման ծրագիր: Միջազգային ճգնաժամային խումբ. Եվրոպական գեկույց N 167, 11.X.2005, *Nagorno-Karabakh: A Plan for Peace, Europe Report N 167, 11 October 2005*-www.crisisgroup.org:

- անցկացվի բացառապես Ղարաբաղի հայերի և ազերիների մասնակցությամբ,

- անցկացվի այն սկզբունքի հիման վրա, որ բոլոր կողմերը կճանաչեն հանրաքվեի արդյունքների իրավական ուժը ...»:

Իհարկե, այս ծրագրերի առնչությամբ կարելի է մատնանշել թե՛ թերություններ, թե՛ վերապահումներ, սակայն ակնհայտ է, որ արդեն իսկ նման ծրագրի առաջադրումը վկայում է այն մասին, որ «Քրայսիս գրուփը» Կոստվոն և Լեոնային Ղարաբաղը համարում է ինքնորոշման իրավունքի սուբյեկտ: Նույնն են արձանագրում և Եվրախորհուրդը՝ իր վերոհիշյալ փաստաթղթերով, ԵՄ-ն ու ԵԱՀԿ-ն՝ իրենց ներկայացուցիչների հայտարարություններով: Կան նաև դա հաստատող միջազգային իրավունքի հեղինակավոր մասնագետների ուսումնասիրություններ²¹: Քանի որ հակամարտության լուծման որևէ տարբերակ պետք է տեղավորվի միջազգային իրավունքի շրջանակներում, իսկ այդ առումով բարենպաստ նորմը ինքնորոշման իրավունքն է, ապա պետք է ապահովել Լեոնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ դրա կիրառելիության մասին վկայող ամբողջական փաստաթղթային փաթեթը:

Հարկ է նշել, որ ինքնորոշման իրավունքը՝ որպես միջազգային իրավունքի նորմ, չի տարածվում անխտիր բոլոր հակամարտությունների վրա: Այդ առումով, անշուշտ, իրավացի են նրանք, ովքեր պնդում են, որ Կոստվոյի հակամարտության կարգավորումը չի կարող լինել նախադեպ այլ հակամարտությունների համար, քանի որ նախադեպը միջազգային իրավունքում նորմաստեղծ աղբյուր չէ²²: Այն կարող է լինել օրինակ, որն արժանի է համակողմանի ուսումնասիրության:

Իհարկե, հակամարտությունների կարգավորման ժամանակ իրավական բաղադրիչը չափազանց կարևոր, բայց միակ բաղադրիչը չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար անհրաժեշտ է ուսումնասիրել կարգավորման վրա հնարավոր ազդեցություն ունեցող բոլոր գործոնները:

Եզրակացություններ

1. Բացարձակապես որևէ հակասություն գոյություն չունի Հելսինկյան եզրափակիչ ակտով արձանագրված սահմանների անձեռնմխելիության (տարածքային ամբողջականության) և ինքնորոշման իրավունքի սկզբունքների միջև: Ավելին, դրանք նաև տարբեր կարգավիճակներ ունեն. եթե առաջինը միայն քաղաքական սկզբունք է, ապա երկրորդը նաև միջազգային իրավունքի նորմ է:

2. Հռչակագրում արձանագրված սահմանների անձեռնմխելիության և տարածքային ամբողջականության սկզբունքները կիրառելի են պետությունների միջև հարաբերություններում, ինքնորոշման իրավունքի սկզբունքը գործում է պետության և նախկինում նրա սահմանների մեջ

²¹ **Luchterhandt O.**, *Nagorny Karabakh's Right to State Independence according to International Law*, Boston, 1993.

²² **Вельяминов Г.**, *Признание “непризнанных” и международное право (Россия в глобальной политике, т. 5, N 1, 2007, с. 120-129).*

ներառված ինքնորոշված տարածքի միջև հարաբերություններում: Ընդ որում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն, պետք է խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը:

3. Հակամարտությունները կարգավորվում են ոչ թե նախադեպերի հիման վրա, այլ միջազգային իրավունքի նորմերի շրջանակում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար միջազգային իրավունքի նորմերի շրջանակում միակ հիմքը ինքնորոշման իրավունքն է:

4. Լեռնային Ղարաբաղն ինքնորոշման իրավունքի սուբյեկտ է, և հակամարտության լուծման բանալին Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ լինելու հանգամանքն է: Կարգավորման գործընթացի հաջողությունը պայմանավորված է այդ գործոնի ամրապնդմամբ:

5. Քանի որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում տեղի են ունեցել իրադարձություններ (պատերազմ, ԼՂՀ հարակից շրջանների նկատմամբ վերահսկողության հաստատում ԼՂՀ պաշտպանության բանակի կողմից, ԼՂՀ Մարտակերտի, Մարտունու և Շահումյանի շրջանների տարածքների օկուպացիա Ադրբեյջանի կողմից և այլն), որոնց օգտագործումով փորձեր են արվում աղավաղել հակամարտության էությունը ինքնորոշման իրավունքի հարթությունից տեղափոխելու համար սահմանների անձեռնմխելիության սկզբունքի կիրառման շրջանակներ, խիստ կարևոր նշանակություն է ստանում հակամարտության ողջ ընթացքին վերաբերող փաստաթղթերի ու վավերագրերի ամբողջական փաթեթի ձևավորումը:

6. Եվրոպական կառույցների անդամ երկրներին առնչվող հակամարտությունների կարգավորման ժամանակ լրացուցիչ, բայց կարևոր գործոն է այդ կազմակերպությունների հիմնարար արժեքների նկատմամբ վերաբերմունքը:

**ПРАВОВАЯ ОСНОВА УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ:
ТЕРРИТОРИАЛЬНАЯ ЦЕЛОСТНОСТЬ ИЛИ ПРАВО НА
САМООПРЕДЕЛЕНИЕ**

ТОРОСЯН Т. С.

Резюме

Для правильного планирования стратегии в процессе урегулирования конкретного конфликта и формирования реальных ожиданий важнейшее значение имеет рассмотрение юридических основ этого процесса. При этом решающую роль играют статус конфликта (международный или локальный), рамки его урегу-

лирования (международные организации, имеющие на это полномочия, другие организации, государственные структуры), нормы международного права (при международных конфликтах), применяемые для урегулирования конфликтов, механизмы и возможные результаты урегулирования.

За последние десятилетия в качестве международного рассматриваются не только конфликты между государствами, но и такие, в которых одна из сторон не является государством (например, Косовский и Карабахский конфликты). Урегулированием этих конфликтов занимаются международные организации, соответствующие требованиям VIII главы устава ООН (ООН и ОБСЕ). Важнейшее значение имеет определение сторон конфликта, диктующее круг норм международного права, используемых для урегулирования. Если сторонами конфликта являются страны, члены ОБСЕ, то конфликт относится к межгосударственным отношениям, и в качестве норм международного права применимы принципы территориальной целостности и неприкосновенности рамок Заключительного акта ОБСЕ (Хельсинки, 1975 г.). Если же одной из сторон конфликта является не государство, а самоопределяющийся субъект, то в этом качестве должно применяться право на самоопределение, которое не только является еще одним принципом, заложенным в Заключительном акте, но и нормой основополагающих документов ООН (Устав ООН, Соглашение по политическим и гражданским правам и т. д.).